ԿԷՑ (Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց)

Նախաորակավորման հայտահրավեր

Երկիր՝	Հայաստանի Հանրապետություն
Ծրագրի անվանում՝	Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց Լոտ 3 – ԲԼՀՀ փոխակերպիչ կայան «Այրում» բարձր լարման հաստատուն հոսանքի (ԲԼՀՀ) փոխակերպիչ կայանի նախագծում և կառուցում
Վկայակոչման համարը՝	BMZ No: 2007 66 352
Ֆինանսավորող՝	KfW բանկ
KfW բանկի գնման համարը՝	505480
Պատվիրատու՝	«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերություն (ԲԷՑ ՓԲԸ) Գլխավոր տնօրեն՝ Հայկ Հարությունյան 0084 Հայաստան, Զ. Անդրանիկի 1 փող., Երևան, Հեռ.՝ + 374 60380001 Էլ.փոստ՝ projects@hven.am
Հայտարարության հրապարակման ամսաթիվ՝	**07.05.2020թ.**
Հայտերի ներկայացման վերջնաժամկետ՝	**31.07.2020թ. ժ.12:00 (Հայաստանի ժամանակով)**
Լեզու՝	անգլերեն

Հայտի մեկ (1) բնօրինակը և երկու (2) պատճեն պետք է ներկայացվեն Իրականացնող Խորհրդատուին

Խորհրդատուի հասցե՝	**Fichtner GmbH & Co. KG** **Sarweystrasse 3, 70191 Stuttgart, Germany**

Հայտի երկու (2) պատճենը պետք է ներկայացվեն Պատվիրատուին

Պատվիրատուի հասցե՝	**«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ** **0084 Հայաստան, Զ. Անդրանիկի 1 փող., Երևան,**

<u>Պահանջվող ծառայությունների համառոտ նկարագրություն՝</u>

Հրավիրվում են անկախ հայտատուներ ներկայացնելու համար նախաորակավորման փաստաթղթեր (համաձայն KfW ուղեցույցի) Հայաստանում լիավարտ հիմունքներով «Այրում» ԲԼՀՀ փոխակերպիչ կայանի նախագծման և կառուցման հետ կապված մրցութային գործընթացին մասնակցելու նպատակով: Աշխատանքի ծավալը իր մեջ կներառի նախագծումը, արտադրությունը, մատակարարումը, մոնտաժումը, շահագործումը, ինչպես նաև մոնտաժվող սարքավորումների և լարման աղբյուրի փոխակերպիչի (ԼԱՓ) տեխնոլոգիայով ամբողջ ԲԼՀՀ փոխակերպիչ կայանի (մոտավորապես 350ՄՎտ նոմինալ հզորությամբ) ընդունման փորձարկումը՝ որը կհամապատասխանի հաջող շահագործման պահանջներին բոլոր առումներով: Աշխատանքների ավարտման համար նախատեսված ժամանակահատվածը 36 ամիս է, որից հետո հետևում է 24 ամսվա թերությունների վերացման ժամկետը:
Պատվիրատուն ակնկալում է, որ շահագրգիռ հայտատուները պետք է պահանջեն նախաորակավորման փաստաթղթերը projects@hven.am էլեկտրոնային փոստի միջոցով: